

«ՄՈՒՐՃ»-Ի ԵՐՐՈՐԴԻ ԵՒ ՉՈՐՐՈՐԴԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ. «Մուրճ»-ի անցեալ 10-րդ №-ով վերջացաւ Լէօ'ի «Կորածներ» վէպը. Այդ վէպն նս, որպէս «Յեցեր»-ը և «Խն-Կարապետ»-ը, տպւեց առանձին գրքով և լանձնեց գրավաճառութեան: Դա, ուրեմն, «Մուրճ»-ի երրորդ հրատարակութիւնն է: «Կորածներ» վէպի դիրքը «Մուրճ»-ի դիրքից փոքր է և հաւասար՝ «Յեցեր»-ի դիրքին: Առանձին տպած այդ վէպն ունի 168 երես և արժէ 50 կոպէկ:

Նոյն հոկտեմբեր ամսին առանձին բրօշուրով հրատարակեց բժշկապետ Գրիգոր Տէր-Գրիգորեանցի (Ղալաբցու) «Մուրճ»-ի մէջ տպւած չօղւածը՝ «Մանուկների մարսողութեան գործարանների մի քանի հիւանդութիւնները», «Մուրճ»-ի երեսների դիրքով: Բրօշուրը ունի 16 երես և արժէ ընդ ամենը 5 կոպէկ,—մի գին, որը մատչելի է ամենահամեստ գրպանին: Հեղինակի և «Մուրճ»-ի խմբագրութեան ցանկութիւնն է—այդ և դորա նման բրօշուրներ, որ «Մուրճ»-ը ապագայում կը հրատարակէ, մտցնել ամենալեւտին խրճիթները: Հեղինակը դիտմամբ գրում է պարզ և հասկանալի լեզուով, որպէս զի մեծամասնութիւնից հասկացւի, որովհետեւ նորա նպատակը բոլորովին գործնական է:

«ՄՈՒՐՃ»-Ի ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՂՆԵՐԻՆ: «Մուրճ»-ը, որպէս լատինի է, («ո») տառը դէն է գցում («ւ») տառի առջև, երբ առաջինը չի արտասանուում: Բնական է, որ, իբր նորութիւն, շատերին խորթ թւաց այդ նորաձևութիւնը: Բաց ղեռ ևս ոչ ոք չը կարողացաւ ապացուցել այդ նորաձևութեան վնասակարութիւնը. ընդհակառակը, մեր գրելու ձևը, իբր աւելի բնական, աւելի մատչելի առողջ դատողութեանը, հետևողներ գտաւ. նոյն իսկ Լոնդոնի շրջաններում, որոնք կատարելապէս սարսափում են այդպիսի նորաձևութիւններից: Դորա վկայու-

թիւնը տալիս է «Նոր-Գար»-ի խմբագրութիւնը, որը իւր թեղթակիրացներէից ստանում է ալդ ուղղագրութեամբ գրութիւններ (տե՛ս «Նոր-Գար», № 172, 1889 թ., Գրօնիկօն), չը նախած որ ալդ թերթը ոչ մի առիթ բաց չի թողնում աշտարակի դանգակներով իւր հարաւ—հրողը թնդացնել ի սփիւռս աշխարհի՝ իւր ընթերցողներին ալդ լեզուական ոճրագործութիւնից զգուշացնելու համար:

Իսկ ալդ դեռ բաւական չէ: Նոյն իսկ ալդ աւանդապահները իրանց գոված աւանդութիւնը քանդում են իրանց ձեռքով, թող տալով, որ «Ա» տառը գործածելի ոչ միայն ա, ի, ո ձայնաւորներից չետոյ, այլ և, ո՛հ ոճրագործութիւն, ճան, ասում ենք, բաղաձայններից չետոյ, ջէ՛ թէ՛ անար հին օրէնքը սա է, որ հիւնը (ւ) բաղաձայնի հնչիւն ունի միմիայն ա, ի, ե տառերից չետոյ և երբէք հիւնը կից չէր գործածուում բաղաձայնի հետ: Օրինակ, աւանդապահները չեն խորշում գրելու՝ շարունակուում, գրուում և այլն, առանց «ո»-ի, մինչդեռ իրանց երևակայական «օրէնքով» պէտք է գրէին՝ շարունակուում, գրուում և այլն, Ալդ դեռ բոլորը չէ. նրանք գրում են՝ թիւ, թւի, թուում և ոչ թուի, թուում. ուրեմն թող են տալիս, որ մի բաղաձայնից չետոյ գործածելի հիւնը (ւ). իսկ երբ մենք մի ալդպիսի ուղղագրութիւն ընդհանրացնում ենք, ճոքա ալդ հռչակում են՝ իբր կանոնից, ի հարկէ իրանց հնարած կանոնից գուրս բան:

«ՄՈՒՐՃ»-Ի ԲԱԺԻՆՆԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄՆ: «Մուրճ»-ի անցեալ №-ում մենք բաց արինք Արտասահմանեան Գրախօսութեան բաժինը, որը ոչ ալ ինչ է, եթէ ոչ ընդարձակումն արդէն գոյութիւն ունեցող բաժնի: Դորա մասին անցեալ անգամ մենք տւինք անհրաժեշտ բացատրութիւնը:

Նոյնաժամանակ մենք բաց արինք մի ալ բաժին՝ Արտասահմանեան Թղթակցութիւններ և շուտով մտադիր ենք բանալու՝ Գաւառական Թղթակցութիւնների բաժինը: Վերջինիս մասին մի ալ անգամ: Իսկ ինչ վերաբերում է Արտասահմանեան Թղթակցութիւնների բաժնին, կարևոր ենք համարում բացատրութիւն տալ այսօր, որովհետև այսօրուայ համարում նա արդէն բռնում է մօտաւորապէս այն ծաւալը, որ մենք մտադիր ենք նրան լատկացնել ճան ապագայում:

Որ հայ ընթերցող հասարակութիւնը չի կարող և չը



պիտի փակած մնալ միմիայն զուտ և նեղ հակական մթնոլորտի մէջ՝ ալդ կարօտ չէ բացատրութեան։ Հալ ընթերցող հասարակութիւնը չի կարող և չը պիտի ասէ ինքն իրան՝ ինձ ինչ, թէ ինչ է կատարուած դուրսը։—Դա ամօթալի խոստովանութիւն է։ Որպէս վնասակար է ինտելլիգենտ ֆրանսիացու, անգլիացու, գերմանացու, ռուսի համար անտեղեակ մնալ իւր երկրի սահմաններից դուրս եղած կեանքից, նոյնպէս և վնասակար է, երբ հալը անտեղեակ մնալ իւր մօտաւոր տեսողութիւնից դուրս եղած կեանքից։ Ինտելլիգենտ մարդիկ ամենուրեք գրեթէ նոյնանման պահանջներ ունին։ Սղելութիւններ կան, որոնցից անտեղեակ լինելը գրեթէ ամօթ է մի զարգացած մարդու համար, ինչ ազգութիւնից ուղուած է նա լինի։ Նոյնն է, երբ Արտասահմանի ընթացիկ կեանքի մասին առհասարակ մարդիկ տեղեկութիւններ չ'ունին։

Լուսաւորած ազգերի տւած օրինակը մի անգամ չէ, երկու անգամ չէ, որ մեր ազգին որպէս ղեկավար է ծառայել։ Ալդ իսկ պատճառով է, որ մեր մտաւոր զարգացման գործում զԷլ-խաւոր դերակատարները, մտքեր լուսաւորողները եղել են և են նոքա, որոնք լուսաւոր ազգերի կեանքին հմուտ են եղած և են։

Ալդ կեանքը միայն քաղաքականութեան մէջ չէ կալանում, որին և նւիրած է «Մուրճ»-ի Փաղաքական բաժինը։ Փաղաքականութիւնից դուրս կալ մտաւոր, տնտեսական, ոգեկան, գրական և գիտնական, սօցիալական կեանք, որ և արտալայուում է ազգերի աւօրեալ գործունէութիւնով։ Ալդ գործունէութիւնը արտալայուում է աւօրեալ եղելութիւններով, անցքերով, որոնց մէջ կան փոքրներ, կան և խոշորներ, կան, որ տեղական հետաքրքրութիւն ունին, կան, որ ընդհանուրի գիտութեանը պէտք է հասցնւին։

Արդ, ընդունելով իբր անկասկած, որ մի ալդպիսի բաժնի մեծ կարօտութիւն կալ, որ նա պէտք է լինի մի ամսադրում, բոլոր խնդիրը նորանումն է, թէ ինչպէս պէտք է վարել մի ալդպիսի բաժին, որ նա իւր նպատակին հասնէ։ Չէ՞ թէ հետաքրքրական և նոյն իսկ կարեւոր գործեր շատ են կատարուած աշխարհքումս, բայց որոնց մասին լիակատար զեկուցում անկարող է տալ մի ամսագիր առհասարակ, ուր միայն թէ ալդ անել կարողանալ մի հակական ամսագիր։ Նոյն իսկ տեղի սղութիւնը սահմաններ է դնում ամեն մի բաժնին։

Ընտրողութիւնը, ուրեմն, անհրաժեշտ է։ Բայց ընտրողութիւնով էլ կարելի է շատ և քիչ տալ, նախած ամեն մի



խնդրին նւիրած էջերի թւին: Եթէ մենք ուզենանք մի խնդրի մասին ընդարձակ զեկուցում տալ, ալն ժամանակ լուրերի թիւը պէտք է սահմանափակենք. բայց կարճառօտ զեկուցումներով կարող ենք լուրերի թիւը շատացնել:

Մենք նպատակաւարմար ենք համարում վերջինս, ինքն ըստ ինքեան հասկանալի համարելով, որ ամսագրի համար կարճառօտը մի օրաթերթի կարճառօտը չէ և որ մեր լրագրութեան սովորական լուրերը, օտարների կեանքից, «Մուրճ»-ի մէջ հաղիւ կարող են տեղ գտնել:

Այն բաժինը, որ մենք ալժամ բացում ենք, թո՛ղ ներւի մեղ ասել, չը կալ մեր օրաթերթերի և ոչ մէկի մէջ: Այն ինչ մեր լրագիրներին մէջ «Արտաքին Տեսութիւն» անունով չալտնի է, մի խառը բաժին է թէ զուտ քաղաքական և թէ ոչ քաղաքական կցկտուր լուրերի, շատ անգամ միայն կուրեօղներին, հապճեպ հաւաքած ամենաերրորդական լրագիրներից, առանց սխտեմի: Հաստատ կարելի է ասել, որ լրագիրների ալդ բաժինը չ'ունի ընթերցողներ, ալսինքն չը կան մարդիկ, որոնք հետ և են ալդ բաժնին, մարդիկ, որոնք սպաս են, թէ ի՞նչ է լինելու հետեւալ Ռ-ի ալդ բաժնում: Իրօք, պատահում են թղթակցութիւններ Արտասահմանից երբեմն հետաքրքրական. բայց ալդ ոչ միայն սակաւ է պատահում, ալ և պատահական է լինում՝ նալած թէ ալս ինչ թերթի պատահական թղթակիցը ո՞ր երկրումն է և ո՞ր քաղաքում և նալած թէ ալդ պատահական թղթակիցը ե՞րբ է բարեհաճում մի երկտող գրել: Մի խօսքով, մի փոքր եթէ չալիաղանցնելու լինինք, մեր լրագիրների ալդ բաժնի համար կարող ենք կրկնել չալտնի խօսքը՝ եղած, չ'եղած մի հալիւ է:

«Մուրճ»-ի «Թղթակցութիւններ Արտասահմանից» անունով բաժինը տարբերելու է հալ ընթերցողներին չալտնի եղածներից երեք առաւելութիւններով. մէկ՝ որ ալդ թղթակցութիւնները կախումն չեն ունենալու «Մուրճ»-ի միջոցներից՝ իւր սեպհական թղթակիցներն ունենալու, երկրորդ՝ որ ալդ թղթակցութիւնները վերաբերելու են միմիայն ալնալիսի նիւթերին, որոնք իրօք ուշադրութեան արժանի են զարգացած և զարգացումն ստանալու հակումն ունեցող ընթերցողների համար, և որոնք հանրաեւրոպական հետաքրքրութեան արժանացած են. երրորդ՝ որ ճօքա լինելու են հաւաստի, առաջնակարգ աղբիւրներից: Եթէ ալդ բոլորի վերալ աւելացնելու լինինք «Մուրճ»-ի ընդհանուր մի չալկութիւնը, որ ալստեղ սըրբադրութիւնը կատարւում է բարեխղճութեամբ և որ ու-

րեմն անունները և ստատիստիկական և այլ թւերը տպւում են խիստ հսկողութեան ներքոյ,—ալն ժամանակ հասկանալի կը լինի, որ մեր այդ բաժնի համար մենք սպասում ենք նոյն ուշադրութիւնը ընթերցող հասարակութեան կողմից, ինչպէս և «Մուրճ»-ի միւս բաժինների համար:

Թղթակցութիւնների շարքում մենք տպելու ենք «Մուրճ»-ի թէ՛ չատուկ թղթակիցների գրածքները և թէ՛ արտասահմանեան հրատարակութիւնների տւած տեղեկութիւնները առանց խտրութեան: Յատուկ թղթակիցներին մենք խնդրում ենք իրանց թղթակցութիւնների մէջ լինել կարճ, ամփոփ, առանց փնասելու բովանդակութեան. բացի ալն դէպքերից, ուր նկարագրականը հետաքրքրութեան գլխաւոր առարկան է:

ՆԵՐՔԻՆ ՏՅՍՈՒԹԻՒՆԸ այս անգամ անկարող եղանք հրատարակել:

Վերջին ժամին ստացւեցին՝ «ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»։ Աշխարհաբար թարգմանեց և լուսաբանեց ԽՈՐԷՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԷ։ Ս. Պետերբուրգ, Սկօրօ-խօղօլի տպարան, 1889 թ., գինն է 1 ռ. 50 կոպէկ:

«ՀԱՆԴԷՍ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ», երկրորդ գիրք, Մօսկւա, 1889 թ. գինն է 2 ռ.:

ՎՐԻՊԱԿ. «Մուրճ»-ի անցեալ 10-րդ Ք-ում տպւած լօղւածում «Հայկական թատրոնի մասին» (Ամսւալ Քրօնիկ, Լուսինի), երես 1637, թատրոնական անցեալ և ներկայ գործիչների թւում լինւած է նաև Գ ա բ Ր ի է Լ Պատկանեան, մինչդեռ այդ ազգանունով թատրոնական գործիչ եղած է Մ ի ք ա չ է Լ Պատկանեան:

Առանձին հրատարակւած բրօշուրի մէջ՝ «Մանուկների մարտողութեան գործարանների մի քանի հիւանդութիւնները», երես 9, հարինք խօսքը, որ դրւած է փակագծի մէջ, պէտք է ջնջել: Սխալը եղած է ոչ հեղինակի կողմից: